ուժերի հաւասարակշռութիւն կը պահպանի, եւ մէկը միւսին չէ կարող ճնշել: Հոգեւորականութիւնը այն ժամանակ միայն սկսում է վտանգաւոր դառնալ, երբ իր զարգացած աստիճանով շատ բարձր է լինում ժողովրդից:

Ասլանը չկամեցաւ այդ հարցի մասին երկար խօսել, որովհետեւ շատ վիճելի էր: Արեգակը արդէն սկսել էր խոնարհոել դէպի իր մուտքը: Հայրիկը չէր շտապում վերադառնալ զրոսանքից եւ, ինչպէս երեւում էր, նա դիտաւորութիւն ունէր այն գիշեր պահել մեզ վանքում: Բայց Ասլանը շնորհակալութեամբ հրաժարոեցաւ, ասելով, որ քաղաքում հարկաւոր գործ ունի եւ չէ կարող մնալ: Երբ վերադարձանք վանքը, Ասլանը ինձ պատոիրեց, որ իսկոյն ձիաները պատրաստել տամ: Ես գնացի դէպի ախոռատունը, իսկ նրան թողեցի Հայրիկի հետ միայնակ:

ԺԶ. ՄԱՏՆՈՒԹԻՒՆ

Արեւը մտել էր, եւ երեկոյեան մութը բաւական թանձրացել էր, երբ մենք, մեր ձիաները հեծնելով, մեծ գոհունակութեամբ մնաք բարեաւ ասեցինք Հայրիկին եւ, դուրս գալով վանքից, սկսեցինք իջնել Վարագայ լեռան զառիվայրը: Ճանապարհը Հայրիկի շնորհիւ հարթած էր, եւ մենք մեծ դժուարութիւն չէինք կրում իջնելու ժամանակ: Մեզ ուղեկցում էր մի քահանայ, որին կոչում էին տէր Եղիշէ: Թէ ի՞նչ գործ ունէր նա վանքում կամ ինչո՞ւ եկաւ նա մեզ հետ եւ կամ ի՞նչ էր խօսում նա ճանապարհին Ասլանի հետ, այդ ես չգիտեմ, որովհետեւ նրանք յիսուն քայլով ինձանից առաջ էին գնում, իսկ ես իմ ձիու դանդաղ ընթացքով գնում էի նրանց ետեւից: Միայն այդ մարդու անցեալ եւ ներկայ կեանքը բովանդակում էր իր մէջ մի քանի այնպիսի գծեր, որ անկարելի էր չհետաքրքրոել նրանով: Նա ոչ մի տեղում կանոնաւոր ուսում չէր ստացել. սկսեալ իր պատանեկութեան հասակից, նա եղել էր այն ըղձախնդիր ուսումնասէրներից մէկը, որ, հին դարերի փիլիսոփաների նման, երկար թափառել էր զանազան երկներում գիտութիւն մուրալու նպատակով: Նա դիմել էր այս եւ այն նշանաւոր քերականին, ճարտասանին, տրամաբանին, աստուածաբանին, նա մտել էր նաեւ անապատական աբեղաների միաբանութեան մէջ, բայց ոչ մի տեղում իր ուսումնասիրութեանը չէր կարողացել յագուրդ տալ: Նա մտել էր մինչեւ անգամ մի եզոիտական դպրոց եւ շուտով թողել էր: Նա կենակցութիւն էր ունեցել Դամասկոսի շէյխերի եւ Լիբանանի ռաբբիների հետ: Նրա մոլաշրջիկ կեանքը եւ ամէն տեղ իր որոնածը չգտնելը՝ ծնեցրին նրա մէջ մի տեսակ թերահաւատութիւն դէպի ամէն ինչ: Եւ այլ կերպ լինել կարող չէր: Նրան չյաջողոեցաւ հասնել այն աղ-